ծառայությունների համեմատությամբ: Միաժամանակ պետք է ստեղծել զբոսաշրջիկների անվտանգության երաշխիքներ, ապահովել շրջակա միջավայրի պահպանությունը, ուժեղացնել մրցակցությունը զբոսաշրջային ինդուստրիայում, ռացիոնալ օգտագործել զբոսաշրջային ռեսուրսները, ավելացնել պետության եկամուտները, ստեղծել նոր աշխատատեղեր և այլն:

ԱՐՍԵՆ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, տ.գ.թ.

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ «ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏԱԽՏԱԿ» ՄԵԹՈԴԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ («ՄԵՏՏԱ ԳՐՈՒՊ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)

Առևտրային կազմակերպություններում նորարարական գործունեության գնահատման, վերջինիս մրցունակության բարձրացման հետ կապված հիմնախնդիրները բացահայտելուն և լուծելուն է միտված Եվրամիության կողմից մշակված «Innovation Scorecard» («Նորարարական հաշվետախտակ») մեթոդը:

«Նորարարական հաշվետախտակ» մեթոդի միջոցով հնարավոր է գնահատել առևտրային կազմակերպությունների ներսում տեղի ունեցող փոփոխությունների արդյունքը 5 մակարդակներով՝ նորարարական ռազմավարություն, նորարարական գործընթաց, ռեսուրսների ապահովում, նորարարական կառուցվածք, նորարարական մշակույթ:

Նշված չափորոշիչներից յուրաքանչյուրում առանձին գործոններ ունեն իրենց արժեքը, որոնց առկայության, մասամբ լինելու կամ չլինելու դեպքում ստանում ենք այդ գործոնի ճշգրտված արժեքը: Նման գործոնների գումարը կազմում է տվյալ չափորոշիչի արժեքը, որի առավելագույն գումարը հավասար է 1-ի: Յուրաքանչյուր չափորոշիչ բանաձևում ունի իր կշիռը: Բազմապատկելով վերջինս չափորոշիչների արժեքներին՝ կարող ենք ստանալ ցուցանիշ, որը բնութագրում է, թե տվյալ ընկերությունը որքանով է նորարարական: Եթե այդ ցուցանիշը մեծ է 0.5-ից, ապա ձեռնարկության գործունեությունը համարվում է նորարարական: Այս ցուցանիշը հնարավորություն է տալիս ճշտել, թե առևտրային կազմակերպության որ մակարդակում կան թերացումներ և ճշգրտել դրանք:

Վերը նշված մեթոդի օգնությամբ հաշվարկենք ՀՀ-ում գործող «Մետտա Գրուպ» ընկերության նորարարական գործակիցը (տե՛ս աղյուսակ):

«Մետտա Գրուպ» ընկերությունը հայ-կիպրոսական համատեղ ձեռնարկություն է, որը ձևավորվել է անօրգանական քիմիայի ինստիտուտի հիմքի վրա, ունի մի շարք գիտահետազոտական լաբորատորիաներ և զբաղվում է հանքաքարերի վերամշակմամբ և առանձին նյութերի մասհանմամբ, այդ տեխնոլոգիաների մշակմամբ և կատարելագործմամբ: Այլ կերպ ասած այն իր վարքով նորարարական առևտրային կազմակերպություն է:

Աղյուսակ

Նորարարական ցուցանիշների արժեքների հաշվարկման մեթոդ[1]

Չափորոշիչներ	Գործոններ	Գործոնի կշիռը	Ոչ (0)	Մասամբ (0.5)	Այո (1)	Արդյունք
Նորարարական ռազմավարություն	Նորարարական նախագծի մշակման միջին ժամկետը փո՞քր է ձեր մրցակիցներից	0.3		+		0.15
	Պահպանո՞ւմ եք ընկերության հիմնական գործունեությունը համաշխարհային մակարդակի վրա	0.2			+	0.2
	Ձեր կողմից թողարկված ապրանքի կամ ծառայության վաճառքից ստացվող հասույթը կամ շահույթը շա՞տ է, քան ձեր մրցակիցների մոտ	0.5		+		0.25
	Ընդամենը					0.6
Նորարարական գործընթաց	Ձեր ընկերությունը անընդհատ հավաքո՞ւմ է սպառողներից, մատակարարներից նոր ցանկություններ և առաջարկների մասին տվյալներ, որպեսզի դրանք հաշվի առնի հետագա զարգացման նախագծերում	0.6			+	0.6
	Ձեր ընկերությունը նույն ակտիվությա՞մբ է անցկացնում նոր առաջարկների որոնումը, ինչպես իրականացնում է հիմնական գործունեությունը	0.3	+			0
	Նոր նախագծերի ղեկավարները ունե՞ն արդյոք ռեսուրսների վերահսկման լրիվ ազատություն	0.1	+			0
	Ընդամենը					0.6
Հեռանկարների սպասելիություն	Ձեր ընկերությունը ԳՀՓԿԱ-ի վրա կատարված ծախսերը դիտարկում է որպես ներդրո՞ւմ, թե՞ ծախս	0.3	+			0
	Ձեր ընկերությունն իրականացնո՞ւմ է Նոու-հաու-ի արտաքին աղբյուրների հետ փոխանակումներ	0.5	+			0
	Ձեր ընկերությունն ունի՞ հմուտ էքսպերտների ցանց՝ նորարարությունների հնարավորություններից հնարավորինս շուտ օգտվելու համար	0.2		+		0.1
	Ընդամենը					0.1

[1] Աղյուսակը կազմվել է ըստ Поляков С., Степнов И., Федоров А.«Формирование инновационной стратегии развития организации с исполжзованием метода Innovation Scorecard», Инновация, 2003, N 10 և «Մետտա Գրուպ» ընկերության աշխատակիցների շրջանում անցկացված հարցումների:

Չափորոշիչներ	Գործոններ	Գործոնի կշիռը	Ոչ (0)	Մասամբ (0.5)	Այո (1)	Արդյունք
Նորարարական կառուցվածք	Ձեր ընկերությունն ունի՞ ոչ ֆորմալ խմբեր, որոնք զբաղվում են միայն նորարարական նախագծերով	0.6	+			0
	Ձեր ընկերության լավագույն մասնագետների մասին տեղեկատվությունը բա՞ց է ու հասանելի	0.2			+	0.2
	Ձեր ընկերության մեջ կիրառվո՞ւմ են միջոցառումներ՝ բացատրելու համար, որ աշխատակիցները պետք է լինեն նորարար	0.2	+			0
	Ընդամենը					0.2
Նորարարական մշակույթ	Ձեր ընկերությունում գիտելիքների կառավարումը և ներֆիրմային ուսուցումը համարվո՞ւմ են կազմակերպված և վերահսկելի գործընթաց	0.4		+		0.2
	Ձեր ընկերության աշխատակիցները անկախ իրենց գործունեությունից մասնակցո՞ւմ են ներֆիրմային ուսուցման գործընթացներին	0.3		+		0.15
	Ձեր ընկերության աշխատակիցները ընդունո՞ւմ են նորարարությունների կարևորությունը և նրանց դերը ընկերության գործունեության մեջ	0.3	+			0
	Ընդամենը					0.35

Այժմ հաշվենք նորարարական գործակիցը.

Նորարարական գործակիցը =0.2*0.6+0.25*0.6+0.1*0.1+0.2*0.25+0.2*0.35=0.4

Ստացված ցուցանիշից երևում է, որ «Մետտա Գրուպ» ընկերությունը նորարարական չէ: Ստացված արդյունքներից երևում է, որ նշված ընկերության թույլ կետերն են ռեսուրսների ապահովումը, նորարարական կառուցվածքը և նորարարական մշակույթը, մասնավորապես ընկերությունը ԳՀՓԿԱ-ի վրա կատարված ծախսերը չի դիտարկում որպես ներդրում, ընկերությունը չունի ոչ ֆորմալ խմբեր, որոնք զբաղվում են միայն նորարարական նախագծերով, ընկերության աշխատակիցները չեն ընդունում նորարարությունների կարևորությունը և նրանց դերը ընկերության գործունեության մեջ:

Ուշադրության է արժանի նաև այն փաստը, որ ըստ եվրոպական մեթոդաբանության այս առևտրային կազմակերպությունը նորարարական չէ:

Ուստի, եթե «Մետտա Գրուպ» ընկերությունը վերանայի վերը նշված հիմնախնդիրները, կարող է վերածվել եվրոպական չափանիշներով բարձր նորարարական գործակից ունեցող ընկերության:

Այսպիսով, վերը նշված մեթոդի կիրառումը կապահովի հայկական առևտրային կազմակերպությունների համար նոր կառուցվածքային և կազմակերպական շրջանակներ, որոնցում կստեղծվեն նոր ապրանքներ և նոր տեխնոլոգիաներ, որոնց շնորհիվ հայկական առևտրային կազմակերպությունները ձեռք կբերեն մրցունակություն թե՛ տեղական և թե՛ միջազգային շուկաներում: